

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԸ

## ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳԱՒԱՌՈՒՄ

Համազգային յօբելանսը գաւառում շարունակում է արձագանք տալ, և զանազան տեղեցից մեզ հասնում են տօնակատարութեան նկարագրութիւններ պարունակող թղթակցութիւններ:

Այսպէս՝ Մօզրովից մեզ գրում են, որ այդ քաղաքի ծխ. դպրոցի ուսուցչ. խմբի նախաձեռնութեամբ տօնակատարութիւններն անցել են այնտեղ բաւական խանդավառ Շաբաթ, նոյեմ. 19-ին, տեղի է ունեցել դպրոցական հանդէս, ուր ուսուցչինքն բանախօսել են: Նոյնպէս տեղի է ունեցել, յօգուտ դպրոցական Փօնդի, էժանագին (5—10 կ.) մի ներկայացում, որից զուտ արդիւնք գոյացել է 21 ր. Դպրոցական Փօնդի օգտին ևս այդ քաղաքում մատնանով հաւաքովի է մօտ 300 ր. նամակագիրը յայտնում է, թէ մտադրութիւն կայ դարձեալ մի երեկոյթ կազմակերպել համազգային տօնի առիթով:

Ղալարից ևս մեզ գրում են, թէ տօնական օրերում այնտեղ ևս արձագանք է գրտել մեծ յօբելանսը: Ծխ. դպրոցի ուսուցչութիւնը կազմակերպել է աշակերտական քերիկոյթ, ուր արտասանվել են օրվայ յարմար ճառեր, երգվել են երգեր և ի վերջոյ աշակերտուհիները պարել են ժողովրդական պարեր՝ նուագակցութեամբ թառի Բացի դրանից՝ նոյն ուսուցչ. խումբը կազմակերպել է երեկոյթ հասակաւորների համար, որ անցել է բաւականին լաւ, ներկայութեամբ բազմաթիւ հասարակութեան, և որի միջոցին՝ յօգուտ դպրոցական Փօնդի՝ հանդիսականները շրջանում հաւաքովի է մօտ 150 ր.:

Վերին-Աղղանից ևս մեզ գրում են, թէ այնտեղ էլ են կատարվել հանդէսներ, իսկ տեղական ծխ. դպրոցի ուսուցչութիւնն ու մի քանի մասնաւոր անհատներ իրանց շըրջանում հանգանակել են յօգուտ դպրոցական Փօնդի 51 ր. 50 կ.:

Շուխում ևս, նախաձեռնութեամբ տեղական ծխ. դպրոցի վարչութեան, տօնվել է հայ գրերի 1500-ամեակի և սոպագրութեան 400-ամեակի յօբելանսը բաւական աջող կերպով:

Երանանում, Կերչում, Ինչպէս և Սարգը-վարում (Պարսկ.) տեղի են ունեցել պատշաճաւոր տօնակատարութիւններ: Սարգը-վարից գրված նամակից իմանում ենք, որ այդ քաղաքի հայ գաղութին ևս իր շրջանում հանգանակութիւն է արել յօգուտ դպրոցական Փօնդի:

## ԹՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԹԻՒՒՐԿԱՂԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տրապիզոն, 10 նոյեմբեր

Հայ գրերու և սոպագրութեան յօբելանսի առթիւ հոկտ. 13-ին դպրոցական փոքրիկ հանդէսներ կատարուած էին միայն, բայց զլիւսաւոր ակտը յետաձգուած էր մինչև նոբընտի պատրիարք Զաւէն արքեպիսկոպոսի ժամանումը:

Հասնելով Տրապիզոն պատրիարք սրբազանը պատարագ մատոյց Մեսրոպի, Սահակի, զրոց վաստակաւորներու և սոպագրիչներու յիշատակին: Գարողի մէջ, պատրիարքը դիտարութիւն ըրաւ, որ իր գալուտասի առթիւ եղած շաալ ծախքերը եթէ յատկացուէին տեղական դպրոցներուն, աւելի օգտակար և արժանաւոր գործ կատարուած կըլար և կապահովուէր վարժարաններու ապագան:

Կեսօրէն յետոյ կատարուեցաւ տառ ու տիպի յօբելանսական հանդէսը նախագահութեամբ սրբազան պատրիարքին: Ներկայ

էին կառավարութեան և բոլոր տեղական ազգերու ներկայացուցիչներն ու աչքի զարնող անձնաւորութիւնները, ինչպէս նաև անզլիական, ֆրանսական, ռուսական, աւստրիական, գերմանական, ամերիկեան, բելժիական, իտալական և պարսկական հիւպատոսներն իրենց փոխանորդներով միասին:

Գարեգին վարդապետ յաջող բանախօսութիւնով մը վեր հանեց ս. Մեսրոպի և ս. Սահակի արժանիքները. անոնք,—բաւ,— երբէք նման չէին այժմեան կղերականներուն, այլ լոյսի, գիտութեան առաքելներն էին հայ ժողովրդի համար: Օրուան տօնին նշանակութեան մասին խօսեցան էթմէքանեան և Պօղոսեան, Հնչակեան կուսակցութեան կողմէ բանախօսեց Կօզիկեան: Թիւրքերէն լեզուով օրուան տօնին մասին շատ յաջող խօսեցաւ պ. Թորոսը: Հայ բողոքական եղբայրները լայն և սիրայօժար մասնակցութիւն ունեցան հանդէսին մէջ. անոնց կողմէ խօսեցաւ պատուելի Զաքարեանը՝ նիւթ ունենալով ճշայ գրականութեան ներկան ու ապագան:

Նկատ արտասանութիւններ՝ Սիամանթօյի «Դարերու վրէժը», Ահարնեանի «Յարգանք բեզ» և այլն:

Հանդէսին մասնակցեցաւ հայ երաժշտական խումբը իր նուագած մի քանի կտորներով:

Ափսոս որ կարգադրիչ մասնախումբը մոռցեր էր հրաւիրել եւրոպական լեզուներով բանախօսներ, որոնք բացատրէին հանդէսի նշանակութիւնը ներկայ գտնուող եւրոպացիներուն:

Առ հասարակ հանդէսի բովանդակութիւնը թոյլ էր և ձանձրացուցիչ:

Կերթական դպրոցական Փօնդի» համար բացուած հանգանակութիւնը հազիւ հազ հասաւ 2—3000 դրուշի (մօտ 250 րուբլի):

Երեկոյեան դարձեալ ի պատիւ տառ ու տիպի յօբելանսներուն կազմակերպուեցաւ ժողովրդական սեղան, մուտքի վճարով (2 րուբլի): Ներկաներու թիւը կը հասնէր 100-ի:

Բաժակաճառերու ժամանակ օսմ. պարլամենտի էրզրումի երեսփոխան Գարեգին Փաստրմաճեանը վէճի բնուեցաւ Պօլսոյ պահպանողականներու ներկայացուցիչ Պօլսոյ անհանգիճէնդիի հետ: Վէճը պիտի մեծնար, եթէ պատրիարք հայրը չմիջամէր: Դպրոցական Փօնդի օգտին հանգանակութիւնը թէ և կը շարունակուի, բայց ոչ մի շօշափելի արդիւնք երևան չգալը ակնհեր է արդէն:

Ովսանաներ, կրակոտ ճառեր, շաալ ծախսեր և մանաւանդ ոգևորուած, բայց անվճար խոստումներ—ահա թիւրքահայերու յատկանշական կողմը:

Երէկ երեկոյեան Տրապիզոնի սիրողները ներկայացուցին Ահարնեանի «Արցունքի հովիտը», տիպ ու տառի յօբելանսներու առթիւ: Սիրողներէն ոմանք միայն յաջող կատարեցին իրենց դերը: Ուրախալի էր օրիորդներու յօժար մասնակցութիւնը, հակառակ ժողովրդի բամբասանքներուն: Օրիորդ Զարուհի Փերիի դերը տարաւ շապագանց յաջող Գոյացած եկամտաւ յատկացուած է Վերթական Փօնդին:

Ներկայացուեցան մի քանի կենդանի պատկերներ «ս. Մեսրոպ», «Աշխատանք» և այլն:

Նուագեց հայ երաժշտական խումբը լարաւոր գործիքներով: Դահլիճը զարդարուած էր հայերէն տառերով, գրական դէմքերու պատկերներով և բոլոր հայ թերթերու զրուակներով:

Տեղացի հասարակութիւնը գոն մնաց: Ներկայացումը դարձեալ պիտի կրկնուի յօգուտ Վերթական Փօնդի: Խ. Պետտաջի